ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2026թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Թանգարանների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և հիմք ընդունելով մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 30-ի N 1 եզրակացությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող Գրիգոր Խանջյանի «Մեքսիկական շարք» խորագրով 5 (հինգ) թանգարանային առարկաները 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի հունվարի 15-ը «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով՝

2026 թվականին լրանում է անվանի գեղանկարիչ և գրաֆիկ Գրիգոր Խանջյանի ծննդյան 100-ամյակը: Հոբելյանական միջոցառումների շրջանակներում Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպվելու է մեծածավալ ցուցահանդես, որտեղ ներկայացվելու են նկարչի աշխատանքները «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի, ընտանիքի և տարբեր թանգարանների հավաքածուներից:

Նախագծով առաջարկվում է «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին պայմանագրի հիման վրա 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի հունվարի 15-ը ժամանակավոր պահպանության հանձնել «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուում ներառված Գրիգոր Խանջյանի «Մեքսիկական շարք» խորագրով 5 (հինգ) թանգարանային առարկաները:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
__ _____ 2026 թ.
հ. _____-Ա որոշման

№	Հաշվառման նիշը	Հեղինակը	Անվանումը	Ստեղծման թիվը	Նյութը	Չափսը սմ-ով	Լուսանկարը
1	ԵԺԱԹ–152/4	Գրիգոր Խանջյան	«Հուշեր Մեքսիկայից» շարքից, «Որտեղ ես դու, որդի Աստծո», «Մեքսիկացին դիմակների հետ»	1976	թուղթ, պաստել	74*97	
2	ԵԺԱԹ–152/2	Գրիգոր Խանջյան	«Հուշեր Մեքսիկայից» շարքից, «Որտեղ ես դու, որդի Աստծո», «Մեքսիկացին պատկերի հետ»	1976	թուղթ, պաստել	97x74	
3	ԵԺԱԹ–151/5	Գրիգոր Խանջյան	«Մեքսիկացիները» շարքից, «Մեքսիկացի»	1976	թուղթ, պաստել	75*54	
4	ԵԺԱԹ–151/2	Գրիգոր Խանջյան	«Մեքսիկացիները» շարքից, «Կին և տղամարդ»	1976	թուղթ, պաստել	75*54	
5	ԵԺԱԹ–151/3	Գրիգոր Խանջյան	«Մեքսիկացիները» շարքից, «Պատանի»	1976	թուղթ, պաստել	74*54	